№ 163 Սեպտեմբերի 26 (Հոկտեմբերի 8) 1879 Սեպտեմբերի 26 (Հոկտեմբերի 8) № 163

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլ կէս տարվանը 6 րուբլ։

—

[illegible]

—

[illegible]
Тифлисъ. Редакція „Мшакъ"

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
([illegible])

—

[illegible]

—

[illegible] 2 կոպէկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

[illegible]

ԱՅՍՏԵՂ ԻՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԵՆՔ

—

«Մշակի» նախընթաց համարներում խօսելով Կ. Պօլսի հայոց ընկերութիւնների մասին, մենք այն եզրակացութեանը հասանք, որ Հայաստանի համար բոլոր գործող ընկերութիւնները անպատճառ պէտք է միանան մի ընկերութեան մէջ։

Բայց մինչև որ Կ. Պօլսի ընկերութիւնները կը խորհրդակցեն իրանց միութեան գործի մասին և [illegible] իրանց միութիւնը, մենք, ռուսահայերս, որոնք համակրում ենք և միշտ պատրաստ ենք նիւթապէս և բարոյապէս օգնել Թիւրքիայի մեր եղբայրակիցներին, մենք ի՞նչ պէտք է անենք.... Պէտք է այդ ժամանակ անպայման միանալ, թէ նրանց միութեան գործի աջողութիւնը տեսնելով, պէտք է նոյնպէս պատրաստվենք կազմակերպել մեր ուժերը մեր Թիւրքիայի եղբայրներին աւելի լաւ օգնելու համար։

Վստահութեամբ կարող ենք ասել, որ մեր յայտնած մտքերին համակրում են մեր հասարակութեան բոլոր դասակարգերի անձինք, բայց մի՞թէ այդ համակրութիւնը կը մնի լոկ պլատոնական և չի դառնայ իրական։

Շատ լաւ է, որ «Մշակի» [illegible] մի քանի [illegible] կարողացաւ մի տարւայ մէջ 12,000 րուբլ հաւաքել յօգուտ «Արարատեան» ընկերութեան, մենք պատրաստ ենք և [illegible] մէջ էլ կայանայ թէ չը կայանայ մեր ցանկացած միութիւնը, շարունակել նուիրել մեր ուժերը Կ. Պօլսի ընկերութիւնների գործին,—բայց արդեօք կարող ենք մենք [illegible] տալ [illegible] նոյն աջողութեամբ գործը առաջ տանել...

Ճշմարիտ է, մենք գրեցինք մի քանի յօդուածներ, յորդորեցինք հայ հասարակութիւնը նուէրներ տալու, հասարակութիւնը համակրելով գործին և մեզ հաւատ ընծայելով, սկսեց կամաւոր նուէրներ ուղարկել մեր խմբագրութեան անունով։ Այդքան կարող է անել մի քաղաքի խմբագրութիւն։ Մենք բաւականացանք կամաւոր նուէրներով։ Բայց մենք չը կարողացանք կազմել ոչ պարբերական նուէրներ, ոչ թատրոնական ներկայացումներ, ոչ կոնցերտներ և խնջոյքներ յօգուտ «Արարատեան» ընկերութեան։ Այդ է պատճառը, որ մեր ստացած նուէրների մեծ մասը Թիֆլիսից դուրս էին հաւաքւում, իսկ նոյն իսկ Թիֆլիսը համեմատաբար դեռ. գրեթէ ոչինչ չէ տուել յօգուտ «Արարատեան» ընկերութեան։ Մենք [illegible], որ եթէ լաւ աշխատէինք, Թիֆլիսից դեռ կարելի էր մեծ գումարներ ստանալ նոյն նպատակով։ Համոզուած ենք որ վերջը և Թիֆլիսն էլ [illegible] կը տայ այն մարդասիրական շարժմանը, որ վերջին տարին այդքան նշանակելի է եղել գաւառներում և Ռուսաստանի եւրոպական մասի հայաբնակ քաղաքներում։ Բայց դորա համար աշխատողներ հարկաւոր են, դորա համար հարկաւոր է ստանալ մեր խմբագրութեանց դուրս մնացած անձինքների կողմից համերաշխ [illegible]։ Մենք միայն առաջարկութեան խօսքով յորդորում էինք, և յետոյ համբերութեամբ սպասում էինք որ մեզ [illegible] ընդունում էինք և ուղարկում էինք որտեղ հարկաւոր էր։ Մենք ոչ մի համագէտ, ներկայացում, խնջոյք չը կազմեցինք, ոչ [illegible] և [illegible] այդ չենք կարող անել։ Դա մի խմբագրութեան գործ չէ, դա մնացած թիֆլիսեցիների գործն է։

Այժմ մենք համոզուած ենք որ այս հանգամանքով մնացած անձինք կարող են, եթէ ուզենան, մի տարւայ մէջ մեզանից երկու անգամ աւելի հաւաքել, մանաւանդ որ, [illegible] Թիֆլիսը որ ուրիշ նպատակների համար բաւական է տուել, դեռ. գրեթէ ոչինչ չէ տուել այդ նպատակին։

Բայց արդեօք կարո՞ղ է և մնացած անձանց ձեռքում այդ [illegible]

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

[illegible]

—

(Վերջը)

—

IV.

[illegible]

V.

[illegible]

VI.

[illegible]

[illegible]